# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 122

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ԽՄԵԼՈՒ ՋՐՈՎ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ <<ՆՈՐԱՎԱՆՔԻ ՁՈՐ>> ԿՈՉՎՈՂ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՆՈՐ ԽՄԵԼՈՒ ՋՐԱԳԾԻ ԿԱՌՈՒՑՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով, Արենի համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Տալ համաձայնություն Արենի համայնքի Արենի բնակավայրում բնակիչներին խմելու ջրով ապահովելու նպատակով <<Նորավանքի ձոր>> տարածքում նոր խմելու ջրագծի կառուցմանը՝ որպես հրատապ ծրագիր:

2. Առաջարկել Արենի համայնքի ղեկավարին.

ա) Նոր ջրագիծը կառուցել և միացնել ս/թ.-ի օգոստոս ամսին հրատապ ծրագրով կառուցած ջրագծին:

բ) Խմելու ջրագծի միացումից հետո առաջացած և նախկինում կառուցված 63մմ տրամաչափի պոլիէթիլենային խողովակները ապամոնտաժել՝ հետագայում այլ ծրագրերում օգտագործելու նպատակով:

գ) Մրցութային կարգով ձեռք բերել անհրաժեշտ 110մմ տրամաչափի 2680 գծամետր պոլիէթիլենային խողովակները:

դ) Աշխատանքներում ներգրավվել Արենի ՀՈԱԿ-ի աշխատակիցներին և Արենի բնակավայրի բնակիչներին:

3. Ծրագրի առավելագույն արժեք սահմանել 8 500 000 ՀՀ դրամ:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ԵԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀՌՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**